



ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԸՆԴԴԵՄ ԿՈՒՌԻՊՑԻԱՅԻ

Յվարի հեղինակ՝ Արտակ Օհանյան



ՎԱՆԱԶՈՐ 2004

**ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ
ԸՆԴԴԵՄ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ**

Վաճառոր 2004





Գրքույկը տպագրվում է «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Քաղաքացիական նախաձեռնությունների խթանումը Լոռու մարզի Վանաձոր, Ալավերդի և Ստեփանավան քաղաքներում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով» ծրագրի շրջանակներում՝ «Համաշխարհային Ուսուցում-Հայաստան» ՀԿ հզորացման ծրագրի տրամադրած դրամաշնորհի աջակցությամբ և ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության /USAID/ տրամադրած միջոցներով

Հրատարակումը՝
«Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթի

Տպագրությունը՝
«Հ. Սինիկյան» ՍՊԸ, Վանաձոր, Մյասնիկյան 24, հեռ.(051)40229

Տպաքանակը՝ 500 օրինակ
Տարածվում է անվճար

Գրքույկի ձեռքբերման համար կարող եք դիմել
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ հետևյալ հասցեով՝
377204, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59,
հեռ. /051/ 42268
ֆաքս /051/ 23155
էլ.փոստ. hcav@hcav.am; asakunts@hcav.am



ՀԶԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված «Քաղաքացիական նախաձեռնությունների խթանումը Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով» ծրագրի շրջանակներում կազմակերպվեց լրագրողական մրցույթ կոռուպցիոն երևույթների բացահայտման և դրանց դեմ պայքարի նպատակով:

Մրցույթի միջոցով նպատակ ունեինք խթանելու Վանաձորի, Ստեփանավանի և Ալավերդու լրատվական միջոցների և լրագրողների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ քաղաքացիական նախաձեռնությունների ձևավորման գործում:

Իհարկե, կոռուպցիոն երևույթների բացահայտումը հղի է բազմաթիվ վտանգներով և մտահոգություն կար, որ լրագրողները ակտիվությամբ չեն մասնակցի մրցույթին: Հաշվի առնենք, որ նման թեմայով մրցույթ առաջին անգամ էր կազմակերպվում Լոռու մարզում:

Ի դեպ, մրցույթի մասնակցության առաջին հայտը ներկայացրեց իններորդ դասարանի մի աշակերտ: Դա լրագրողական աշխատանք չէր, բայց որպես քաղաքացիական նախաձեռնության օրինակ հուսադրող է:

Ի վերջո, մրցույթին մասնակցեցին ընդամենը ութ լրագրող, որոնք ներկայացրեցին տաս աշխատանք: Գրքույկում ներկայացված են մրցույթի բոլոր մասնակիցների աշխատանքները: Հոդվածները տպագրված են, իսկ հեռուստատեսային և ռադիո աշխատանքները ամփոփված են սկավառակում:

Թե ինչքանով են մրցույթի մասնակիցները խորամուխ եղել կոռուպցիոն երևույթների բացահայտման մեջ, կդատի ինքը՝ ընթերցողը:

Մնում է միայն հուսալ, որ այս մրցույթը վերջինը չի լինի, և Լոռու մարզի լրագրողներն էլ ավելի ակտիվ և համարձակ կլինեն իրենց աշխատանքում՝ ապահովելով քաղաքացիների իրազեկումը իշխանության մարմինների գործունեության թաքցրած էջերի վերաբերյալ:

ՀԶԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար
Արթուր Սաքունց

ԻԿ-ՆԵՐՐ

ԿՈՌՈՒԱԿԻԱՅԻ ԱՅԻ ՂԵՄ

ՎԱՅԻՖԱՐՈՒՄ...

մրցանակ
Էդմոն Մարուքյան
«Մեդիա Գրուպ» լրատվական
հասարակական
կազմակերպություն

Այս պատմությունը իրական է:

Այն սկսվել է 2003թ. սեպտեմբերյան մի օր և շարունակվում է մինչև օրս:

Սա մի պատմություն է կոռուսպացված պետական բուրգի, քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, այս դեպքում, «Մեդիա Գրուպ» լրատվական հասարակական կազմակերպությանը պարտադրված պայքարի, դատական ճնշումների և անհավասար հնարավորությունների մասին:

Ամեն ինչ սկսվեց այսպես....

Սոցիալական Ապահովագրության Պետական Զիմնադրամի (ՍԱՊԶ) Վանածորի Տարածքային Կենտրոնի գլխավոր մասնագետ Մարգարիտա Ռոստոմյանը և առաջատար մասնագետ Արմեն Մխիթարյանը, 28.08.2003թ-ի թիվ 1685 հանձնարարականով, ստուգման նպատակով 15.09.2003թ.-ին այցելեցին «Մեդիա Գրուպ» լրատվական հասարակական կազմակերպություն: Զիմնադրամի ներկայացուցիչները արձանագրեցին, որ կազմակերպության հաշվապահությունը և հրամանների գիրքը վարվել են ճշտիվ և ԶԿ-ն պահպանել է ԶԶ օրենքների և իրավական ակտերի բոլոր պահանջները:

Սակայն ստուգումն այդպես չի ավարտվում մեր օրերում: Եվ դիմեցին հնարամտության: ԶԿ կամավորներին որակեցին որպես թաքնված վարձու աշխատողներ: Ըստ ստուգողների՝ «Վանածորում ԶԿ-ների և համայնքի միջև կապի հզորացում» ծրագրի շրջանակներում անվարձաբանության գործունեություն իրականացնող հինգ կամավորները թաքնված աշխատողներ էին: Սկզբում հայտարարեցին, որ արձանագրված խախտման համար կկազմեն մեկ միլիոն դրամանոց ակտ կազմակերպության և նրա նախագահի նկատմամբ, այնուհետև կազմակերպության ղեկավարության հետ անցան բանակցությունների, որի միակ նպատակն էր գումար կորզելը: Սակայն երբ համոզվեցին, որ ԶԿ-ն անդրդվելի է իր իրավունքների պայքարում, անցան ուժի ցուցադրման:

Զիմնադրամի ներկայացուցիչները հանդգնեցին, որ իրենց սպասումները արդարացված չեն և ԶԿ-ում քաջ գիտակցում են իրենց գործողությունների իրավաչափությունը, գործի դրեցին ակտ կազմելու իրենց հմտությունը: Ենթադրյալ խախտումը արձանագրելուց երեք օր անց՝ 18.09.2003թ-ին, ՍԱՊԶ Վանածորի տարածքային կենտրոնի տեսուչներ Մ. Ռոստոմյանը և Ա. Մխիթարյանը կազմեցին թիվ 1685 ակտը, ըստ որի «Մեդիա Գրուպ» ԼՂԿ-ն պարտավորվում էր 10-օրյա ժամկետում հիմնադրամի հաշվարկային հաշիվ փոխանցել **652.062 դրամ**, որպես հաշվարկված սոցվճար, նաև բանավոր հայտարարվեց կազմակերպության նախագահի նկատմամբ վարչական պատասխանատվության որոշման մասին՝ վարչական տույժ **150.000 դրամ**: Բայց արի ու տես՝ հիմնադրամի ներկայացուցիչները ակտը կազմեցին երեք կամավորների նկատմամբ, ինչը, համաձայնե՞ք, ոչ մի կերպ չի կարող բացատրվել: Զենց այստեղ էլ առաջ է գալիս որպես հասարակության մեջ ամենատարածված և ժողովրդականություն վայելող կոռուպցիոն երևույթը՝ կաշառքը, որին, արդարացիորեն, կազմակերպությունը չզնայ: Փաստորեն, կազմակերպությունը անօրինական գործարքների չզնալու արդյունքում վաստակեց մի մեծ գումարի ակտ:

Կազմակերպությունը քաջ գիտակցելով, որ դատական իշխանություն ասվածը ԶԶ-ում հեռու է անկախ համարվելուց, որպես ռազմավարական քայլ որդեգրեց տվյալ դեպքի հնչեղության ապահովումը և արագ արձագանքման քաղաքականությունը: Այլևս ժամանակ չկորցնելով՝ սկսվեց մի մեծ պաշտպանական ակցիա, որի շրջանակներում բաց նամակներ հղվեցին **ԶԶ նախագահին, Վարչապետ-**



Մրցանակ Էդմոն Մարուքյան «Մեդիա Գրուպ» լրատվական հասարակական կազմակերպություն

տին, Աժ նախագահին, Սոցիալական Ապահովագրության Պետական Հիմնադրամի նախագահին, ԱՄՆ դեսպանին, ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցչությանը, ԵԱԳԿ երևանյան գրասենյակի ղեկավարին, ՄԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչությանը, Human Rights Watch, Amnesty International, Youth Human Rights Movement միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին և բոլոր անկախ լրատվամիջոցներին:

Նամակներին արագ արձագանքեցին և իրենց աջակցությունը հայտնեցին **Համաշխարհային Ուսուցում/Հայաստան, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալությունը, Հայաստանում Ամերիկայի դեսպանատունը, ԱԳՀ ԳԿ կենտրոնը, ԶԼՍ-ները և միջազգային կազմակերպությունները:** Մեր կողքին կանգնեցին նաև բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք գիտակցում էին, որ խնդիրը «Մեդիա Գրուպ» ԼՂԿ-ինը չէ միայն, այլ, կամա թե ակամա, վերաբերում է յուրաքանչյուր ՀԿ-ի, որն ուներ և իր աշխատանքներում ներգրավում էր կամավորներին: Փաստի առիթով կազմակերպությունը տեղական հեռուստատեսությամբ կազմակերպեց ուղիղ եթեր, իրավիճակը մանուլի ասուլիս, կազմակերպեց հանդիպում այդ խնդրով մտահոգված ՀԿ-ների հետ, որոնք էլ, գիտակցելով հարցի լրջությունը, հանդես եկան պետական մարմինների կողմից ՀԿ-ների և կամավորական շարժման վրա ճնշում գործադրելու երևույթները դատապարտող հայտարարությամբ:

Հղված նամակների առիթով «Մեդիա Գրուպ» ԼՂԿ էր այցելել Հայաստանի Հանրապետության Սոցիալական Ապահովագրության Պետական Հիմնադրամի նախագահի խորհրդական **Ստեփան Հայրապետյանը**, որին հիմնադրամի նախագահը՝ **Ֆ. Մուշեղյանը**, հանձնարարել էր քննության առնել դեպքը և պատասխանել մեր նամակին: Նախագահի խորհրդականը տեղում ծանոթանալով դեպքի բոլոր հանգամանքներին, ակտիվ կազմող տեսուչների ներկայությամբ հայտարարեց, որ ինքը ամեն բան կանի իր ենթակամներին արդարացնելու համար: Բացահայտ հովանավորելով իր ենթակամների կատարած անօրինական քայլերը՝ Հայրապետյանն ապահովեց անպատժելիության մթնոլորտի ձևավորում՝ խրախուսելով օրինախախտ տեսուչներին: Այստեղից էլ երևաց, թե ինչքան անաչառ էր հիմնադրամի կողմից իրականացված ծառայողական քննությունը, որն, ի դեպ, մինչ օրս էլ չի ավարտվել և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՍԱՊՀ նախագահը պատասխան չի տվել մեր պաշտոնական գրությանը: Դեպքի կապակցությամբ Վանաձոր այցելեց նաև **ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության բաժնի ղեկավար Անդրանիկ Հարությունյանը**, որը մանրամասն ծանոթանալով գործի հանգամանքներին՝ ողջունեց հասարակական կազմակերպության կողմից ընտրված պայքարի տարբերակները և խոստացավ լրջորեն հետևել գործի ընթացքին:

Այս իրավապաշտպանական ակցիաներին զուգահեռ, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ, դիմում ներկայացվեց ՀՀ տնտեսական դատարանի Վանաձորի նստավայր՝ **թիվ 1685 ակտն** անվավեր ճանաչելու պահանջով: ՀԿ-ում նաև գիտակցվում էր, որ նման ակտի դեմ չբողոքարկելը նախադեպ կհանդիսանար Հայաստանում կամավորական շարժմանը խոչընդոտելու և ՀԿ-ների վրա ճնշում գործադրելու համար: Պետական մարմինների այսպիսի գործելաոճը ՀԿ-ների կողմից որակվեց որպես ոտնձգություն քաղաքացիական հասարակության և քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող քաղաքացիների նկատմամբ: Կարևորվում է նաև, որ տնտեսական դատարանը ստիպված էր գործը լսել Լոռու մարզպետարանի դահլիճում, քանի որ դատավարությանը ուշի ուշով հետևում էին Հայաստանում գործող շուրջ **70 հասարակական և միջազգային կազմակերպությունների, ԶԼՍ-ների ներկայացուցիչներ:**

Այսպիսով, քաղաքացիական հասարակության կրողները, այն է՝ հասարակական կազմակերպությունները, միահամուռ կերպով պայքարում էին կամավորական շարժմանը խոչընդոտող, ՀԿ-ների վրա ճնշում գործադրելու փորձ կատարող պետական կառույցների անօրինական գործողությունների դեմ՝ այդ պայքարում ներդրելով իրենց կազմակերպության ամբողջ ներուժը և ցուցաբերելով աննախադեպ քաղաքացիական ակտիվություն: Հասարակական մեծ հնչելություն ստացած դատավարությունը ամբողջությամբ տեսագրվում և լուսաբանվում էր **Ինտերկասպ հեռուստաստուդիայով:** Շուրջ երկուսուկես ամիս ընթացող դատավարությունը ավարտվեց 2003թ-ի դեկտեմբերի 17-ին: Դատարանը տեղի չտալով հիմնադրամի ճնշումներին, դատավոր **Արշակ Շահոյանի նախագահությամբ**, վճռեց բավարարել «Մեդիա Գրուպ» ԼՂԿ-ի դիմումը՝ անվավեր ճանաչելով 2003թ-ի սեպտեմբերի 18-ին **ՀՀ ՍԱՊՀ Վանաձորի Տ/Կ** կողմից իրականացված ստուգման արդյունքում կազմված թիվ 1685 անհիմն ակտը: Միաժամանակ որոշելով՝ հիմնարկումից բռնազանձել կազմակերպության կողմից վճարված պետտուրքը: Դատարանը իր վճռով հիմնավորեց, որ հասարակական կազմակերպությունները կարող են ունենալ կամավորներ: Ինչպես նաև անդրադառնալով ստուգման ընթացքին արձանագրեց, որ ՀՀ ՍԱՊՀ Վանաձորի տարածքային կենտրոնի տեսուչներ **Ս. Ռոստոմյանը և Ա. Մխիթարյանը** ստուգման ընթացքում թույլ են տվել բազմաթիվ խախտումներ՝ չպահպանելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջները: Սակայն ՀՀ Վճռաբեկ դատարանը տեղի տվեց ճնշումներին, դատարանի վճիռը բեկանվեց և գործը հանձնվեց վերաքննության կարգով քննության:

Եվ նորից անհավասար պայքարը շարունակվում է...



Եկաթի ինչպե՞սով՝ Կրոնակ Օլիանյան

մրցանակ էդմոն Մարտիքյան «Մեդիա Գրուպ» լրատվական հասարակական կազմակերպություն

ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրում տեղ գտած որակումների համաձայն նշված դեպքը “Ներքևների” կոռուպցիան է (վարչական կոռուպցիա): Սա բնորոշ է միջին և ստորին օղակի պաշտոնատար անձանց, որոնք ամենօրյա շփումների մեջ են քաղաքացիների հետ: Դրանք հիմնականում հանրային այն ծառայողներն են, որտեղ մեծ է պետական ծառայողների և բնակչության միջև շփումների հաճախականությունը, ինչպես նաև այն ոլորտները, որտեղ պետական ծառայողներն ավելի մեծ ազատություն ունեն տնտեսական խնդիրները տնօրինելու հարցում: Կոռուպցիան ծնող դրոպապատճառների շարքում հարկ է առանձնացնել պետական ոլորտի ծառայություններում ընդգրկված աշխատողների վարձատրության մակարդակի, նյութական խրախուսման, սոցիալական պաշտպանվածության համակարգերի անհամապատասխանությունը նրանց ունեցած լիազորություններին և պարտականություններին, ինչպես նաև նրանց մասնագիտական պատրաստվածության անբավարար մակարդակը և կոռուպցիայի համար հնարավոր պատժելիության ռիսկի ոչ համարժեք աստիճանը, որի արդյունքում էլ ունենք այսօրվա անպատժելիության մթնոլորտը:

Ցավալին այն է, որ մեր հասարակության համար կոռուպցիան ընկալվում է որպես ձևավորված գործարար սովորույթ կամ որոշակի հարցերի լուծման համար լավագույն արդյունավետ միջոց:

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու տեսանկյունից շատ կարևոր է հանրային իրազեկությունը որպես պայքարի կարևորագույն տարր, ինչպես նաև հասարակության մասնակցության ապահովումը կոռուպցիայի հաղթահարման գործում: Հակակոռուպցիոն ցանկացած գործունեության շեշտադրումն առաջին հերթին պետք է լինի անձնական կամ այլ շահադիտական նպատակով պաշտոնական դիրքի որևէ չարաշահում թույլ չտալը կամ այն կանխարգելելը: Կոռուպցիոն երևույթների հաղթահարման լավագույն միջոց կարող է հանդիսանալ պետական ծառայողներին բաց գործընթացով պատասխանատվության ենթարկելու փաստերի մասին հանրությանն իրազեկելը:

Ամփոփելով հոդվածը՝ ցանկանում եմ նշել, որ կառավարության ու նրա կողմից կոռուպցիան հաղթահարելու հանդեպ չկա հասարակական պահանջ, իսկ կոռուպցիան հաղթահարելու կառավարության կարողության հանդեպ հասարակության հավատը միշտ էլ կախված կլինի այն հանգամանքից, թե ինչ ծավալով են պարտադրվում օրենքները և ինչքանով է անխուսափելի պատասխանատվությունը: Հայաստանի անկախացումից ի վեր որոշ զարգացումներ են նկատվում քաղաքացիական հասարակության այնպիսի բաղադրիչներում, ինչպիսիք են անկախ մամուլը և հասարակական կազմակերպությունները:

ՀՀ քաղաքացիները իրենց միավորման իրավունքով ստեղծված ՀԿ-ների միջոցով պետք է ձևավորեն այնպիսի զարգացած քաղաքացիական հասարակություն, որը սեփական հնարավորություններով կվերահսկի պետական իշխանությունների գործունեությունը ընդհանրապես, և մասնավորապես՝ կոռուպցիան կանխարգելելու տեսանկյունից:



Մրցանակ

Գայանե

Հովսեփյան,

«Առավոտ» թերթի թղթակից

ԻՏԱՂԱԿԱՆ ԿԱԿԱԾՈՆԵՐԻ ԱՆԿԱՎԱՆԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԽԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Շուրջ երեք տարի, սկսած 2000թ-ի տարեվերջից, Վանաձորում հաջողությամբ իրականացվում էր մի «ծրագիր», որը կարելի է որակել **«կոռուպցիան գործողության մեջ»**: Քաղաքի առևտրի կետերում վաճառվում էին մարդասիրական կարգով ուղարկվող իտալական արտադրության տավարի մսի պահածոներ, որոնց տուփերին անգլերեն և իտալերեն մակագրված էր. **«Իտալիայի կառավարության և ժողովրդի նվերները»**: Արագ իրացնելու նպատակով դրանց գինն առավել մատչելի էր (**270-300 դրամ**), քան արտասահմանյան այլ պահածոների գինը: Ավելին, դրանք մատչելի էին նույնիսկ հայկական պահածոների համեմատությամբ: Հատկանշական է, որ քաղաքի սոցիալական ծառայությունն այդ կարգի օգնություն առհասարակ չէր ստացել (այլ միայն ալյուր և բուսական յուղ), հետևապես, դրանք ներկրվում էին այլ ճանապարհով: Մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի աշխատանքները լուսաբանող հրապարակումներում էլ այդ տեսակը չէր երևում: Վարկածներից մեկն այն էր, թե դրանք օգնություն ստացող հիմնարկներն այլ կերպ փոխհատուցում են իրենց աշխատավարձերի պարտքերը: Ըստ մի այլ վարկածի (ընդ որում՝ պետական պաշտոնյայից ստացած ոչ պաշտոնական տեղեկատվությամբ) դրանք ստանում էին զորամասերը, մեկուսարանները, գիշերօթիկ դպրոցները: Նույն աղբյուրը պնդում էր, թե օգնության այդ տեսակը միանգամից ձեռք է բերվում կենտրոնական բազայից: Ամեն դեպքում մի երկիր կառավարության կողմից ուղարկվող «նվերը» հազիվ թե ներկրվեր առանց ստացող երկրի կառավարության գիտության:

Այս բացահայտ «ալան-թալանի» մասին, որից ստացված գումարները հայտնի չէ, թե ում գրպաններն են գնում, քանիցս ահազանգել ենք **«Առավոտ» թերթում**: Երկրորդ հրապարակումից հետո այդ առթիվ հետաքրքրվեց **Լոռու մարզի դատախազությունը**, խնդրելով նկարագրել պահածոների արտաքին տեսքը (չնայած հրապարակումներում այդ մասին ճշվել էր): Դրանից հետո ոչ մի պետական մարմին կարծես թե չի զբաղվել այդ խնդրով: Հրապարակումների արդյունքում Վանաձորի առևտրի կետերում մթերքի այդ տեսակը ժամանակ առ ժամանակ անհետանում էր, սակայն դրա փոխարեն այն սկսեց տարածվել մայրաքաղաքում (**«Քարենկամություն» մետրոյի** ստորգետնյա անցուղում, կինոթատրոնի մոտ գտնվող մթերային տոնավաճառում, **ԴՄ-ի** մոտակայքում):

Այս հարցին մամուլում պարբերաբար անդրադառնալով (նաև՝ **«Մամուլը ընդդեմ կոռուպցիայի»** տեղեկագրի 2001թ-ի թ. 8 համարում) հույս ունեինք, թե միգուցե շահագրգիռ որևէ մի մարմին կհազանգի Իտալիայի դեսպանատուն, ավաղ, պարզվում է՝ դեսպանատանը մոտ կանգնած աղբյուրներն իրենց թարգմանիչներով հանդերձ հայկական մամուլ չեն ընթերցում:

Այդ պահածոներն այժմ իսպառ անհետացել են շուկայից. թերևս, պատճառն այն է, որ դրանց պահպանման ժամկետը լրացավ 2004թ-ի փետրվարին: Համենայն դեպս, ինչ-որ մարդիկ զգալի գումարներ աշխատեցին ժողովրդի հաշվին: Իսկ հեռավոր Իտալիայում, հավանաբար, համոզված էին, թե օգնությունը հասնում է կարիքավորներին:



Նպասակ

«արդարացիում» է միզուցները

9

3

մրցանակ
Արմինե Զաքարյան

Կոռուպցիան և կաշառակերությունը, թերևս, նույնքան երկար պատմություն ունեն, որքան մարդկային հասարակությունը: Խնդիրը միայն նրանում է, որ տարբեր ժամանակներում և տարբեր իրադարձություններում այն հանդես է եկել իր բազմաբնույթ դրսևորումներով: Ներկայիս ՀՀ-ն ևս չի կարողացել խուսափել կոռուպցիայի տարածումից, որի պատճառները, թերևս, խիստ բազմաբնույթ են:

Ստորև շարադրված կոռուպցիայի դեպքը տեղի է ունեցել **2002թ-ի հոկտեմբերի 20-ին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում**: 2002թ-ի հոկտեմբերի 20-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Լեռնապար գյուղի գյուղապետի թեկնածու **Ս. Ալեքսանյանը**, Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի **ԿԸՀ-ի** կողմից թեկնածուների գրանցման վերջնակետը լրանալուց երեք օր առաջ կաշառել է **/1000 դոլար/ ԿԸՀ-ի** նախագահին՝ նույն գյուղի գյուղապետի թեկնածու **Ս. Հարությունյանի** թեկնածությունը հանելու համար՝ մի շարք կեղծ և կրկին կոռուպցիոն ճանապարհով ձեռք բերված մեղադրանքների և փաստաթղթերի հիման վրա: Նշված կեղծ փաստաթղթերից առաջինի համաձայն, որը նախապատրաստվել է **Ս. Ալեքսանյանի** կողմից Արագածոտնի մարզի **Ծաղկահովտի անձնագրային բաժնի վարիչին** կաշառելու ճանապարհով **/200 դոլար/**, իբր թե **գյուղապետի թեկնածու Ս. Հարությունյանը** վերջին տարիների ընթացքում հանդիսացել է Արագածոտնի մարզի **Ծիլքար գյուղի** բնակիչ, այնինչ **Ս. Հարությունյանը** երբևէ չի հանդիսացել այլ, քան Լեռնապար գյուղի բնակիչ:

Համաձայն երկրորդ փաստաթղթի, որը պատրաստվել է **Ս. Ալեքսանյանի** աշխատակազմի անդամներից մեկի՝ **Ս. Ալեքսանյանի** կողմից, իբր թե **Ս. Հարությունյանը** նույն գյուղի պահուստային հողերից վարձակալական հիմունքներով օգտագործել է **2.5 հա հողատարածք**, սակայն իր եկամուտների աղբյուրները թվելիս այն թաքցրել է թեկնածուներին գրանցող Կենտրոնական հանձնաժողովը: **Ս. Հարությունյանին** հաջողվել է իր իրավունքները վերականգնելու և իր դեմ ներկայացվող մեղադրանքները հերքելու համար հայց ներկայացնել **Աշտարակ քաղաքի առաջին ատյանի դատարան** և շահել դատը, սակայն վերականգնել թեկնածությունը նրան չի հաջողվել **/ԿԸՀ-ի կողմից թեկնածուների գրանցման վերջնաժամկետը** լրացել էր/:



3
մրցանակ
Ներսես
Կոստանյան

Խալած յուղի, օրենքի, ժողովրդի եւ այլ բաների մասին

Իմ անվանի ընկերներից մեկը սիրում էր կատակով կրկնել. **«օրենքը, մարդիկ մեղավոր չեն, երկիրը երկիր չէ, հողն է մեղավոր»:** Վերջին ժամանակաշրջանում որոշ պաշտոնատար անձինք հեռուստատեսությամբ հաստատում են ասվածը. ստեղծվել են բավարար ու բավականին /եվրոմակարդակի/ օրենքներ և մնում է, որ ժողովուրդն օգտվի դրանցից, դիմի օրենքին: Հիմա ամեն ինչ կգնա Խալած յուղի պես: Ես էլ՝ ժողովրդի թափանցիկ մասնիկը լինելով /անկուսակցական եմ, ոչ իշխանամետ, ոչ էլ ընդդիմադրամետ/, Խալած յուղի տեսությունից օգտվելու ակնկալիքով, դիմեցի Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ գումարի պահանջով: Հալած յուղի գոյությունն այստեղ հաստատվեց՝ դատավճիռը կայացվեց հօգուտ ինձ, քանի որ այլ կերպ չէր էլ կարող լինել /կար ստացական, պարտապանն էլ չհրաժարվեց/:

Կարիք չկա /անշուշտ, հետաքրքիր չէ/ նշել ո՛չ գումարի չափը, ո՛չ էլ պարտապանի որպիսությունը, քանզի հետագա իրադարձությունների ընթացքում նրան տրվեց երկրորդական դերակատարում /չնայած՝ ոչ աննշան/, իսկ թվացյալ Խալած յուղով օժիված գործընթացը այս անգամ ինձ նետեց օրենքի պահապանների ճիրաններում: Եվ նրանց սարդոստայնում հայտնված մարդուս ողիսականը եկավ հաստատելու այն միտքը, որ օրենք ունենալն անչափ քիչ է, ինչ-որ տեղ նույնիսկ ոչինչ, ավելի վատ, քանի որ, պարզվում է, օրենքին դիմելը ոչ թե ապահովում է օրինական պահանջիդ կատարումը, այլև, ընդհակառակը, ստեղծում տառապանքների լրացուցիչ բարդույթ:

Ահա, խնդրեմ: Հարազատ պարտապան դատարան դիմելու իմ քայլը, նախ, ընդունեց մեծ վիրավորվածությամբ, խռովեց /որից ես նույնքան մեծ «վիշտ» ապրեցի/, ապա՝ հայտարարեց. **«Դե, հիմա գնա ու դատարանից գումարդ ստացիր»:** Այս մարզարեական խոսքին այդ պահին բանի տեղ չդրեցի /Խալած յուղը մեջս դեռ «գլգլում» էր/, բայց ժամանակ անց զգացի, տեսա բազմիմաստություն պարունակող «թևավոր» մտքի հեռուն տանող թռիչքը:

Առաջին ատյանի դատարանից մինչև **ԴԱԴԿ Վանաձորի ստորաբաժանում** տանող ճանապարհը անցա առանց խոչընդոտների: Ինձ ոգևորեց նաև ավագ տեսուչ **Սերուժան Նալբանդյանի** ջերմ ընդունելությունը, գործի շուրջ ծավալված հասկացողական խոսակցությունը և «մի տալում» հարց լուծելու նրա անսահման պատրաստականությունը: Անհրաժեշտ տվյալներով հարստացնելով գործի արդյունավետությունն ապահովող թղթապանակը, հետագա գործողությունների ողջ ծանրությունը թողնելով միլիցիայի նախկին բարձրաստիճան սպայի հարթ ուսերին, հեռացա մտովի կրկնելով՝ օրենք, մեռնեմ գորությանդ: Ես ինչ իմանայի, որ դավից անտեղյակ ժողովրդի մասնիկս այդ օրը խաչեցի ինձ պարտք գումարի հետ ստացումը, որ գեղգեղացող տեսուչը այլ թռչուն է և նրա դեմքի ջերմությունն ու աչքի փայլը այլ նշանակություն ունեն, որ թույլ սեռի նկատմամբ նրա ասպետական համակրանքը վեր է ամեն օրենքից: Կարճ ժամանակ անց, պարտապանուհին հյուրընկալեց չսպասված պաշտոնյային, ստիպված ցուցադրական ջերմեռանդությամբ նրան ծանոթացրեց իր ունեցվածքին. երեք սենյականոց բնակարան, բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ, երկհարկանի տուն կառուցելու համար նախատեսված ընդարձակ հողատարածք, այդ նպատակով ձեռք բերված մեծածավալ մետաղական շինկոնստրուկցիաներ, այլումիմե մեծաթռիչք պատուհաններ, այլ շինանյութեր, տնային գույք: Վերջում նա, աղիողորմ արցունքներն աչքերին, տեսուչին պաղատեց ներողամիտ գտնվել ու աճուրդի հանել միայն տնային գույքը, այն էլ այնպես, որ դրանք չվաճառվեն: Թե ինչը հալեցրեց վճռական կատարածուի ապարակուռ սրտի թելերը, դեռևս չի պարզվել, բայց որ «աչքերը փակ»



Յվարի Խոյնճաչ, Արտակ Օհանյան

մրցանակ Ներսես Կոստանյան

տեսուչը կալանք դնելու իր լայն հնարավորությունները փոքրացրեց մինչև նվազագույնի, բացահայտվեց հետազայում: Դատավճռից հետո մեկ տարվա ընթացքում փորձառու, օրինազետ տեսուչը հօգուտ ինձ հասցրեց բռնագանձել ընդհանուր գումարի **1/27 մասը /60.000 դրամ/**, իսկ հօգուտ պարտապանի բռնահանձնեց հիմնական գույքը օտարելու հնարավորությունը, որն էլ, չհապաղելով օգտվել պետպաշտոնյայի առատածեռնությունից, նույն ժամանակահատվածում «ազատվեց վտանգված գույքից և ունեցվածքից»: Ոչ պակաս գործունյա տեսուչը ավարտված համարելով վճռի «կատարումը», անմռունչ փակեց վարույթի թղթապանակը և հանգիստ խղճով հանձնեց արխիվ:

Ինձ ոչինչ չէր մնում, բացի բողոքի ձայն բարձրացնելը: Ս/թ հունվարի կեսին կայացած հանդիպմանը տեսուչը հոնքն էլ չչարժեց: Իսկ նրա «ավետիսը» ավելի խոսուն էր՝ ինքն ամեն ինչ արել է: Պարտապանն ու ամուսինը միաձայն հիշեցրին. բա որ ասում էինք դատարան չդիմես: Այստեղ, ինչպես ասվում է, կարելի է վերջակետ դնել: Բայց ես համառ գտնվեցի: Դիմում գրեցի **ԴԱԴԿ ստորաբաժանման պետին: 15 օր հետո** բողոքս՝ առանց գրանցման և մակագրության, բարեհաջող «վերադարձավ», թե դու չես անձամբ հանձնել: Երկրորդ դիմումս **/թվագրված մարտի 9-ի ամսաթվով/**, դարձյալ առանց պետին հանձնելու, գործավարուհու նուրբ ձեռքով հայտնվեց տեսուչի գրասեղանին ու անհայտացավ դրա դարակներում: Տեսուչը, հանդիպելով իմ պնդակատությանը որոշեց «օգնել»: **Մարտի 22-ին** հրավիրելով իր մոտ, ինձ թելադրեց մի դիմում, որն ամեն ինչ ջնջելու, նորից սկսելու նպատակ էր հետապնդում: Նախ՝ դիմել **փաստաբան Կարինեին**, նրա միջոցով իմանալ պարտապանի աշխատավարձի չափը և տեղեկանքը ներկայացնել իրեն՝ բռնագանձում կատարելու համար /1000 դրամանոց չարչարանք/: «Ինքնամաքրագարվելու» մղունով տեսուչը ինձ կոչ արեց կրկին դիմել դատարան /հեչ, 4000-անոց չարչարանք/ և նոր դատավճռով գործը վերսկսել, իհարկե, եթե ուզում եմ փողերս հետ ստանալ: Իսկ ո՞վ չի ուզի: Սակայն, ավագ տեսուչի հերթական շախմատային քայլն ինձ չոգեշնչեց...

Գրում եմ այս տողերը ու «փիքը» անում. եղբայր, գլոբալ թոհուրոհի, խոշոր խարդավանքների խաչմերուկում ինչ ես նեղանձնական հարցերով բոբիկվել ու ասպարեզ մտել: Խաբվածներից վերջինը չես: Մտքովդ էլ անցնում է այդ մանր պաշտոնյայի գործունեությունը որակել որպես պաշտոնական դիրքի չարաշահում, կոռուպցիայի դրսևորում, դատական պաշտպանվածության իրավունքի խախտում, մտածում ես անգամ նրան դատական պատասխանատվության կանչե՞լ: Ի՞նչ ես դու, ո՞վ ես դու, տո ժողովրդի մասնիկ: Այ, եթե քեզ կոչեին ժողովուրդ, այն ժամանակ, հասկանում ես, քո անունը կտան օրվա ընթացքում բյուր անգամ, քեզ և քո կորցրածի համար կցավեն, բարձր ամբիոններից Ձերդ պայծառափայլությունները կխոստանան աջակցել, ծանր կացությունում հայտնված քո ընտանիքի լուսապայծառ ասպազայի հեռանկարային որոշումներ կընդունեն, մարդուկին կկանչեն ուր որ հարկն է, մատ թափ կտան ինչպես որ կարգն է:

Օրե՞նքը: Օրենքը ստեղծվել է ժողովրդի համար, այլ ոչ թե մասնիկների: Այդպես որ լինի, բոլոր մասնիկներն էլ պորբլեմներ ունեն, որ ամեն մեկով զբաղվեն, օրենք կդիմանա՞: Դրա համար էլ թողնում եմ, որ օրենքը կայանա, ամրանա, հզորանա, հետո...Դիմիր մեկ ուրիշ անգամ, ուրիշ առիթով:

Արդիացված մտածմունքով վերջին անգամ թակեցի Վանաձորի Նժդեհի 16 հասցեով դուռը: Երկհարկանի շենք, ժամանակակից նորոգում, մաքրություն ու փայլ: Մարտ ամսին նորաբնակեցման հրճվանք ապրած **ԴԱԴԿ ծառայության** աշխատակիցներին հանձնված լուսավոր ու ընդարձակ առանձնասենյակներից ամենափառահեղում ինձ դիմավորեց նույնքան շքեղահագ ավագ տեսուչը և, ի գիտություն ինձ, ցույց տվեց **«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 41 և 42 հոդվածները**: «Աչքաճվիստ» այդ քայլով **Մերուժան Նալբանդյանը**, որի լուղովիկյան հայացքը շանթարձակում էր «օրենքը ես եմ» բառակայծերը, կարծես ցանկանում էր ասել՝ տես, ինչեր կան աշխարհում, միայն թե դրանք քեզ համար չեն...

Աշխարհ, աշխարհ, բա ու՞ն համար եմ, խաբեբաների, հը՞...

-ժողովրդի,-գոչում է մի ձայն վերևից:

-ժողովրդի,-արձագանքում են պալատներից:

Օ՛, միթե ինձ էլ կոմիտասյան կամ դաչաղ դառնալու ճակատագիր է սպասվում:



Զարաշահումներ վիճակորակա համակարգում

Վանաձորում, Սպայի տան դահլիճում 2002-2003թթ. հաջորդաբար կայացած երկու դատաքննություններն էլ առնչվում էին զինվորական համակարգում կատարված չարաշահումներին: Երկու գործերն էլ, սակայն, հարուցվել էին զինվորների մահվան փաստի առնչությամբ, քանի որ այդ մահերը անուղղակի հետևանք էին այդ չարաշահումների:

Առաջին դատաքննությունն առնչվում էր զինվոր Սկրտիչ Պողոսյանի ինքնասպանության հետ: Ամբաստանյալի աթոռին մարտկոցի հրամանատար Արարատ Մխոյանն էր և երկու զինծառայողներ: Մեղադրական եզրակացության մեջ /Գուգարքի կայազորի զինդատախազության կողմից տրված/ նշվում է, որ մարտկոցի հրամանատարը, սիստեմատիկ չարաշահելով իր պաշտոնական դիրքը, իր ենթակայության զինծառայողների կենցաղային կարիքները հոգալու պատրվակով ժամկետային զինծառայողներից /թվով 35 հոգի՝ անուն առ անուն մատնանշված է/ հավաքել է հազարական դրամ «ամսվա հասանելիք դրամական բավարարումներից» /ամիս առ ամիս մատնանշված է/: Որպես ժամանակին զորացրվելու նախապայման առաջարկել է իրենց միջոցներով վերանորոգել զորանոցի միջանցքը /նշվում են 10 զինվորների անուններ/: Պահանջել և ստացել է շինանյութեր և գումար /նշվում էին զինվորների անուններ/: Նրանք, ովքեր այդօրինակ պահանջները չեն կատարել, հրամանատարն ստորացրել է՝ սերժանտին ստիպել կատարել շարքային զինվորի պարտականություն հանդիսացող կենցաղային մաքրության աշխատանքներ: Ավելին, այդ աշխատանքների «վերահսկողությունը» հանձնարարել է շարքային զինծառայողների: Այլ կերպ՝ «դրսևորել է իշխանազանցություն, ինչի հետևանքով էլ բարոյական ճնշվածության և հոգեբանական ընկճվածության վիճակում չհամակերպվելով իր նկատմամբ իրականացվող նվաստացումներին և վիրավորանքներին, 2001թ-ի հուլիսի 27-ին, ժամը 21-23-ի սահմաններում կրտսեր սերժանտ Սկրտիչ Պողոսյանն ինքնասպան է եղել»:

Մխոյանը դատարանում չընդունեց, որ ինքը ստիպողաբար գումարներ է հավաքել: Դրամահավաքը և շինանյութ վերցնելը պատճառաբանեց զորամասի տանիքի նորոգման և շինարարական աշխատանքներ կատարելու, ինչպես նաև՝ զինվորների կենցաղային կարիքները հոգալու անհրաժեշտությամբ: «Առաջարկել են, որ ով հնարավորություն ունի՝ օգնի ինչով կարող է»: Ընդ որում՝ դրամահավաքը գաղտնի չի եղել, այլ՝ բացահայտ և կարծես թե՝ «վերադասից» խրախուսվող: Այն հաստատեց նաև զորամասի հրամանատար վկա Խաչատուր Խաչատրյանը /փաստը ներկայացնելով որպես օրինաչափ երևույթ/: «Ղեկավարությունը գիտե՞ր, որ այդտեղ շինարարություն է գնում, գիտեի՞ն, թե ինչի հաշվին է դա կատարվում»,-Մխոյանի շահերի պաշտպան Կարինե Գասպարյանի հարցին ամբաստանյալը պատասխանեց. «Իհարկե գիտեին: Ես նրանց բացատրել էի»:

Դատաքննության ընթացքում տուժողի իրավահաջորդ Արարատ Պողոսյանը հուզված և ըմբոստ ելույթ ունեցավ: «Ամբողջ երկիրը հիմա կռուուցիայի դեմ է պայքարում: Ի՞նչ է կատարվում ձեր զորամասում: Եղ ամբողջ գումարները մենակ Մխոյանն է յուրացրել, ինչ է»,-հարցրեց նա զորամասի հրամանատար Խաչատրյանին՝ առանձնապես պատասխան չակնկալելով: Ընդհանրապես նրա ելույթը քաղաքական հայտարարության բնույթ էր կրում /հաշվի առնենք, որ նրա մեկ այլ որդին էլ զինծառայության ընթացքում հաշմանդամ էր դարձել՝ ծեփի ենթարկվելու հետևանքով:

...Չաջորդ դատաքննությունը շարքային Արտյոն Սարգսյանի /գյուղակաղեմիայի ասպիրանտ/ մահվան կապակցությամբ էր: Չպարզված հանգամանքներում առաջացած ցավերի պատճառով նա տեղափոխվել էր Վանաձորի հոսպիտալ և այնտեղ էլ մահացել, ինչի կապակցությամբ էլ քրեական



Գլխիկի նախնայ, Արտյոն Օհանյան

Գայանե Յովսեփյան

գործ էր հարուցվել: Այս անգամ ամբաստանյալների թիվը հասնում էր տասնվեցի: Ջինվորական համակարգի պաշտոնյաները փորձում էին մեղքը զցել հոսպիտալի վրա /թե նրանք սխալ բուժում էին սկսել, ինչն էլ հանգեցրել էր արյունահոսության/: Յուսպիտալն էլ մեղադրում էր զորամասին՝ զինվորին ծեծի ենթարկելու համար /փաստորեն, սկզբում բժիշկները իբր չեն նկատել կապտուկները, թերևս, հուսալով, որ հիվանդը կլավանա և «թունավորված» լինելու վարկածը կմարսվի, բայց երբ արդեն բժիշկների պատժվելու վախն առաջացավ, դատարանում ոմանք սկսեցին ուշացունով հիշել, որ կապտուկներ են եղել հիվանդի մոտ/:

Այս քրեական գործով էլ, ծեծի ենթարկելու մեղադրանքներից բացի մեղադրանքներ առաջադրվեցին նաև պաշտոնական դիրքի չարաշահման համար: Այս գործով դատվող զորամասի հրամանատարը, սակայն, ավելի մեղմ պատիժ ստացավ /1 տարի 1 ամիս ազատազրկում, քան՝ նախորդ գործով /միևնույն հոդվածով՝ քր. օր-ի 268/ դատվող հրամանատարը, քանի որ ավելի խիստ մեղադրանքն առաջադրված էր դասակի հրամանատարի տեղակալին /մի քանի հոդվածներով դատվող Աղաբեկ Թաղևադյանին/, որը նաև ծեծի էր ենթարկել զինվորներին: Տարբեր ցուցմունքներում, ամբաստանյալներին, տուժողներին, վկաներին ուղղված հարցերից ու պատասխաններից /և կամ մեղավոր լռությունից/ պարզվեց, որ այդ զորամասում էլ էին սովորույթի ուժ ստացել առանձին արտոնյալների՝ տևական ժամանակով արձակուրդ գնալը /նույնիսկ՝ մի քանի անգամ/, ինչի հետևանքով էլ զինվորների միջև պարբերաբար «ռազբորկաներ» էին եղել՝ աշխատանքային պարտականությունների ծանրաբեռնվածության հետևանքով /որոշ դեպքերում ծեծկռուքների առնչությամբ քր.գործերը կարճվել են՝ տուժողների կողմից ցուցմունքը հետ վերցնելու պատճառով, իսկ գաղտնիք չէ այն, որ գործերը «հենց էնպես» չեն կարճվում.../:

Դատաքննության ընթացքում տուժողներին ու վկաներին ուղղված հարցերի մի մասը նպատակ ուներ պարզելու, թե որքանով է զորամասի հրամանատարը մեղավոր՝ զորամասում կատարված օրինախախտումների կապակցությամբ: Շարքային զինվոր, վկա Արման Գաբրիելյանին դատավորը հարցրեց. «Չաճա՞խ ես տուն գնացել-եկել»: «Չեմ հիշում», -պատասխանեց վկան: Վերջինս նաև չէր հիշում, թե իրեն արձակուրդային թերթիկ տվե՞լ են: Ի վերջո պարզվեց, որ 2001թ-ի հոկտեմբերից մինչև 2002թ-ի փետրվարը գտնվել է «արձակուրդի մեջ», որի ընթացքում մեկ անգամ վերադարձել է, որ մասնակցի երդման արարողությանը: «Յրամանատարին նյութապես շահագրգռե՞լ ես», - հարցրեց դատավորը: «Տեղյակ չեմ», -խուսանավեց վկան: «Թող ասի, որ հինգ ամիս բացակայել է՝ ո՞վ է իրեն թողել տուն», -զայրացած միջամտեց տուժողի իրավահաջորդը: «Ասի, թե չասի, ամեն բան պարզ է», -նկատեց դատավորը: Ի դեպ, Գաբրիելյանի ցուցմունքի ընթացքում վկային քաջածանոթ մեկը լրագրողին /տողերիս հեղինակ/ տեղեկացրեց, որ Գաբրիելյանին իրավունք չեն ունեցել զորակոչելու, քանի որ նա տևական բուժում պահանջող հիվանդություն ունի: Եթե դա իրոք այդպես է, ուրեմն կեղծիքն առաջացել է կեղծիքից. հիվանդին անհարկի զորակոչելուց, ինչի պատասխանատվությունն ընկնում է ռազմաբժշկական հանձնաժողովի վրա:

...Ինչ խոսք, այս երկու գործերով չեն սահմանափակվում զինվորական համակարգում առկա չարաշահումները՝ դրանից բխող ծանր հետևանքներով: Պարզապես տողերիս հեղինակը այդ երկու դատաքննությունների մասնակիցն է եղել: Դրանք հազիվ էին ավարտվել Լոռու մարզի առաջին ատյանի դատարանում, երբ հերթական ողբերգությունը տեղի ունեցավ N զորամասում /կրկին Լոռու տարածք/: 2003թ-ի օգոստոսի 6-ին սպանվել են ժամկետային երեք զինծառայողներ /երկուսը՝ եղբայրներ/: Կրկին շրջանառության մեջ է դրված զինվորների հետ կապված գուճարային տալիք-առնելիք խնդիրներ: 2004թ-ի ապրիլի դրությամբ գործը դատարան չէր մտել:

...Կարծում ենք՝ բանակը պետք է լինի վարձու. այնպես, ինչպես արտասահմանյան որոշ երկրներում: Պետության փողերը անհարկի «քամուն չտալու» դեպքում դա կարելի է կազմակերպել, իսկ մինչ այդ բանակում կշարունակվեն կոռուպցիան և կամայականությունները՝ դրանից բխող ծանր հետևանքներով: Ծեծուջարդից խուսափելու նպատակով էլ, չի բացառվում, որ կավելանա «եհովայի վկաների» թիվը: /Ի դեպ, բանակից խուսափելու մեկ այլ դրսևորում էլ կա. ԲՈՒՅ ավարտած մանկավարժ տղաները ձգտում են սահմանամերձ գյուղերում աշխատանքի տեղավորվել: Ահա և կոռուպցիայի նոր աղբյուր/:



մրցույթի
մասնակից

Հովհաննես
Մելքոնյան

ԲԱԿ ԵՍՄԱԿ

ԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՂԵՆՈՒԹՅԱՆ ԵՄԵՐԱՐ

ԱՂՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի նախարար,

իմ մտատանջությունների մասին հատկապես Ձեզ եմ դիմում այն պատճառով, որ Դուք սոցապահովության նախարար եք, ՀՀ-ի ընկերվարական կուսակցության ներկայացուցիչ: Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է, որ Հայաստանը ժողովրդավարական, սոցիալական պետություն է, որը համահունչ է ՀՀ-ի կուսակցության ծրագրին. «Տնտեսությունը պետք է ունենա սոցիալական կողմնորոշում»:

Հայաստանի ղեկավարությունը Համաշխարհային բանկին ու Եվրոկառույցներին պարբերաբար զեկուցում է, որ հանրապետությունը երկանիչ թվերով արտահայտված տնտեսական աճ է արձանագրում, թե մեր երկրում տարեցտարի իբր նվազում է աղքատությունը: Դա հայաստանցիների հոգեկերտվածքին բնորոշ կեղծ մտածելակերպ է, այլոց աչքերին թող փչելու քնավորության գիծ:

Տնտեսական առաջընթացի տպավորություն ստեղծելու նպատակով տարեցտարի արհեստականորեն կրճատվում է «Փարոս» համակարգով նպաստ ստացողների թվաքանակը, թե տեսեք, եթե նպաստ ստացող ընտանիքների թիվը պակասում է, ուրեմն աղքատությունը նվազում է: Սակայն իրականում կատարվում է հակառակ երևույթը: Հարուստներն էլ ավելի են հարստանում, իսկ աղքատները՝ ավելի աղքատանում: Հասարակության խավերի միջև եղած անդունդն ավելի է խորանում, բևեռացումն էլ ավելի մեծանում՝ վտանգավոր հետևանքներով հղի:

«Փարոս» համակարգն այլևս իրեն սպառել է և իր բուն նպատակին աղքատ ընտանիքներին օգնելու գործին չի ծառայում մի քանի պատճառներով.

Պետական նպաստի հիմնադրամի զգալի մասն աշխատավարձի ձևով և այլ զարտուղի ճանապարհներով կլանվում է սոցիալական ծառայությունների կենտրոնների բազմաքանակ աշխատակիցների կողմից, այսինքն՝ այս համակարգում ևս բարգավաճում է «Կոռուպցիա» երևույթը:

Իսկ ՀՀ-ի կուսակցության ծրագիրն զգուշացնում է. «Կոռուպցիան այլևս սպառնում է ոչ միայն տնտեսական բարեփոխումներին, այլև՝ հասարակության քաղաքական կայունությանը»:

Ֆինանսական հնարավորություն ունեցող ծնողներն իրենց զավակների համար ձեռք են բերում բնակարաններ, իսկ իրենք շարունակում են ապրել նախկին բնակարանում, որպես երկու թոշակառուներից բաղկացած կարիքավոր ընտանիքներ: Այդ ծնողների որդիները մեկնում են Ռուսաստան, իրենց դրամի ուժով կարողանում են դառնալ ռուսական անձնագրերով գործարար մարդիկ: Իսկ այդ գործարար որդիների կանայք, որպես «աղքատ» ընտանիքներ, օգտվում են «Փարոս» համակարգի բարեգործությունից:

Աղքատ ծնողների զավակներն ու նրանց ընտանիքները, նոր տուն ձեռք բերելու հնարավորություն չունենալով՝ կուտակվում են մի բնակարանում և իրավունք չեն ունենում աղքատի կարգավիճակ և նպաստ ստանալու: Ինչպես ասում են՝ «կարկուտը ծեծած տեղն է ծեծում», և թվառը դարձյալ մնում է անօգնական:

Սոցիալական անձնագրի կանոնների երկրորդ կետում սևով սպիտակի վրա գրված է. «Յուրաքանչյուր ընտանիքի համար լրացվում է նույն համարով երկու անձնագիր, մեկը՝ ընտանիքի, մյուսը՝ ծառայությունների կենտրոնի համար»: Այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիքի համար լրացվում է մեկ անձնագիր՝ երկու օրինակից: Սակայն հնարավոր է, որ միևնույն մեկ բնակարանում ապրեն մեկից ավելի ընտանիքներ, որոնք ամենաաղքատներն են, սակայն դիտվում են որպես մեկ ընտանիք և ոչ կարիքավոր: Կամ ընդհակառակը՝ հնարավոր է, որ մեկից ավելի բնակարաններում ապրեն միևնույն մեկ ընտանիքի տարբեր անդամներ, որոնք համեմատաբար աղքատներ չեն, սակայն դիտվում են որպես կարիքավոր ընտանիքներ:



Սկզբի հեղինակ՝ Լիբորադ Օլադյան

մրցույթի մասնակից Հովհաննես Մելքոնյան

Ինչքան հայտնի է, նպաստ տրվում է հատկապես անչափահաս երեխաների համար՝ ընտանիքի կարիքավորության աստիճանը որոշելուց հետո: Սակայն ասում են նաև, որ **“армяне даром ничего не делают”**: Եվ սկսվում է սակարկությունը աղքատի կարգավիճակ ստանալու հարցի շուրջ: Ինչպես մեր երկրի դատաիրավական ոլորտում, այստեղ ևս գործում է վաշխառուական «Տուր-տամ» սկզբունքը, քանզի մեր քրեածին հոգեբանությամբ գլխիվայր շրջած ենք պատկերացնում պետական ծառայողի դերը: Այդ իսկ պատճառով պետական աշխատողները ժողովրդին ծառայելու փոխարեն իրենց պաշտոնն օգտագործում են եսասիրական պահանջմունքներին հագուրդ տալու համար:

Ուստի ժողովրդավարությանը և սոցիալական առաջընթացը խթանելու նպատակով առաջարկում են հետևյալ բարեփոխումները.

Լուծարել Հայաստանի սոցժառայությունների բոլոր կենտրոնները, քանի որ դրանք կլանում են աղքատ ընտանիքների անչափահաս երեխաների համար նախատեսված հիմնադրամի զգալի մասը և նպաստում կոռուպցիայի զարգացմանը: Չէ՞ որ ՀՀԿ կուսակցությունն է ստանձնել կոռուպցիայի դեմ պայքարի առաջամարտիկի դերը:

Մատաղ սերնդի կենսապահովմանն օժանդակելու նպատակով բոլոր անչափահաս երեխաներին, մսուրային տարիք ունեցողներին առավել չափով նշանակել նվազագույն նպաստներ՝ առանց «աղքատության աստիճանը պարզելու», ինչպես դա արվում է ժողովրդավարական երկրներում, որտեղ անչափահաս երեխաները վայելում են պետության հովանավորությունը:

Սոցապահովության տարածքային բաժիններում անչափահաս երեխաներին նպաստ նշանակելու համար հատկացնել 1-2 հաստիքային աշխատողներ, որոնց պարտավորեցնել առանց ավելորդ քաշքշուկների, միայն ծննդյան վկայականի և դիմումի հիման վրա նպաստ նշանակելու հարցերը լուծել:

Վերոհիշյալ առաջարկները կենսագործելու դեպքում սոցիալական օգնության հիմնադրամը չի շռայլվի և կոռուպցիայի զարգացման ասպարեզը կփոքրանա:





ԿԱՆԱԶՈՐ 2004